ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՒՆՎԱՐ 2021

No.17

ՄԵՆՔ ՍԿՍՈՒՄ ԵՆՔ ԳԱԼԻՔ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ, ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ 2
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄԸ 5 ՏԱՐԵԿԱՆ Է 3
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՂՈՔԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ 5
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՀԿ ԴԱՏԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ 6
ՏԱՐԱԾԱԾՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 7
«ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՁՈՐԱՑՈՒՄ՝ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԾՏԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ 8

Օր 1

ՄԵՆՔ ՍԿՍՈՒՄ ԵՆՔ ԳԱԼԻՔ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ, ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

- Պլանավորում և թիմային աշխատանք
- Վերլուծություն
- Տեսլական և առաքելություն

Օր 2

- Հինգ տարվա համար գործառնական պլան
- Նոր առաքելություն (շարունակություն)
- Նոր տեսլական (շարունակություն)
- Միջոցառումներ և ծառայություններ
- Նպատակներ և խնդիրներ
- Գործառնական պլանի ղեկավարում

Օր 3

- Իրավական հարցեր
- Ջատագովության մեսիջինգ
- Քարոզարշավներ և հանրային կապեր
- Ջատագովության միջոցառումների փաթեթ

Օր 4-5

- Հաղորդակցման ռազմավարություն և բրենդային ինքնություն
- Իրավունքի կողմի կառուցվածքը
- Ռազմավարական ուղղությունները
- Արժեքներ
- Թվային անվտանգություն
- Բրենդային ինքնություն և արխիվացիա
- Տեխնիկական ռեսուրսների կառավարում
- Հանրային և քաղաքական հաղորդակցություն
- Ձեռնարկատիրական պլան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄԸ 5 ՏԱՐԵԿԱՆ Է

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն, 2021թ.-ի հունվարի 25-ին նշեց իր գործունեության հինգ ամյակը: Կազմակերպության՝ արդեն ավանդույթ դարձած տարեկան հանդիպմանը բացի աշխատակազմից և խորհրդից հրավիրված էին մասնակցել գործընկերներ քաղաքացիական հասարակության սեկտորից, դիվանագիտական կորպուսից, ներկայացուցիչներ տրանս համայնքից: Միջոցառմանը մասնակցում էին նաև ԼԳԲՏԻՔ համայնքի ծնողները:

Ինձ համար մեծագույն պատիվ է նախագահել Հայաստանում և հարավային Կովկասում առաջին տրանս համայնքահեն կազմակերպությունը: Այսօր մենք տոնում ենք կազմակերպության անցած ծանր, բայց արդյունավետ հինգ տարիները: Սա բոլորիս ձեռքբերումն է՝ համայնքի, աշխատակազմի, կամավորների և աջակիցների: Կազմակերպության գոյությունը փաստում է մեր համայնքի կարիքների գոյությունը, որոնք լուծելու համար մենք ամեն օր ջանասիրաբար աշխատում ենք և դեռ շարունակելու ենք: Գենդերային հավասարությունը ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության հենքն է - այսպես բացեց կազմակերպության տարեդարձի արարողությունը ՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը:

Միջոցառման ընթացքում Լիլիթ Մարտիրոսյանը ներկայացրեց նախորդ տարվա գործունեության ծրագրային և ֆինանսական հաշվետվությունները, որոնք արդեն հասանելի են կազմակերպության կայքում: Տիկին Մարտիրոսյանը ներկայացրեց նաև վերջերս իրականացված ռազմավարական և ջատագովության պլանավորման նախնական տարբերակները գալիք հինգ տարիների համար, որոնք շուտով նույնպես հասանելի կլինեն կայքում:

Համայնքի ծնողները հայտնեցին իրենց երախտապարտությունը ՀԿ-ին և անձամբ Լիլիթ Մարտիրոսյանին՝ իրենց զավակների կողքին կանգնելու և անշահախնդրորեն աջակցելու համար. «Կազմակերպության գոյությունը շատ կարևոր է ոչ միայն մեզ և մեր երեխաների անտվանգության համար, այլ նաև այն անգնահատելի ներդրում է ունենում հասարակության փոփոխության և զարգացման գործում», - նշեց ծնողներից մեկն իր ելույթում:

Միջոցառման ժամանակ կազմակերպության նախագահը նաև հանձնեց հատուկ շնորհակալագրեր հետևյալ անձանց և խմբերին՝
«Պատվի շարժումը» ազատական, բարեփոխական շարժման ղեկավար Աշոտ Գևորգյանին 2020թ. ընթացքում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանն անվերապահորեն աջակցելու և կազմակերպությունը հզորացնելու համար:
Տրանս ակտիվիստ Մոնիկա Սարկիսյանին 2020թ. ընթացքում տրանս անձանց տեսանելիությունը բարձրացնելու և կարծրատիպեր կոտրելու համար:
Տրանս ակտիվիստ Մարիա Աթաբեկյանին 2020թ. ընթացքում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության հետ առաջնագծում կանգնելու, ԼԳԲՏԻՔ անձանց և սեքս աշխատողների իրավունքների պաշտպանության համար պայքարելու համար:

RIGHT SIDE
HUMAN RIGHTS DEFENDER NGO

ԼԳԲՏԻՔ անձանց ծնողների խմբին 2020թ. ընթացքում ԼԳԲՏԻՔ անձանց ընտանեկան խնդիրները բարձրաձայնելու և արդյունավետ լուծումներ գտնելու համար:
Համախոհ Օլյա Նալբանդյանին 2020թ. ընթացքում տրանս և ԼԳԲԻՔ համայնքին աջակցելու և հասարակական կարծիքի վրա դրական ազդեցություն թողնելու համար:
Միջոցառման ավարտին Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկո Սխերմերսը հանձնեց Նիդերլանդների արտաքին գործերի նախարարության կողմից Լիլիթ Մարտիրոսյանին շնորհված «Մարդու իրավունքների կակաչ 2020» արձանիկի բնօրինակը:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն շնորհակալություն է հայտնում այս հինգ տարիների ընթացքում կազմակերպության առաջընթացում ներդրում ունեցած բոլոր կազմակերպություններին և անհատներին և վերահաստատում իր առջև դրված խնդիրների լուծման շարունակականությունն ու անընդհատությունը՝ հանուն սեքս աշխատողների և տրանս անձանց իրավունքների:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ

This project is funded by the European Union

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն, ընդլայնելով իր համագործակցությունը միջազգային և տեղական ՀԿ-ների, ֆոնդերի, նախաձեռնող խմբերի, անհատներ հետ, սկսում է «COVID-19. Քաղաքացիական հասարակության ճկունություն և կայունություն» տարածաշրջանային ծրագիրը, որն իրականացվում է ԱՅՐԵՔՍ Եվրոպայի (ներկայումս «Հավասար իրավունքներ և անկախ մեդիա», ERIM) և Մարդու իրավունքների տուն Երևանի (ՄԻՏ Երևան, HRHY) կողմից՝ Եվրոպական միության (ԵՄ, EU) ֆինանսավորմամբ:

Ծրագրի նպատակն է աջակցել ՀԿ տրանսգենդեր կամավորներին և ակտիվիստներին (մասնավորապես այն տրանսգենդեր անձանց, որոնք անցնում են հորմոնաթերապիա) ստանալ հոգեբանական խորհրդատվություն՝ հաղթահարելու իրենց խնդիրները, ինչպես նաև ծրագիրը հնարավորություն է տրամադրում Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ի աշխատակիցներին և խորհրդի անդամներին հաղթահարել կորոնավիրուսի հետևանքներով առաջացած մասնագիտական այրումը, մասնակիցները կունենան վերակնգնողական հանգստի հնարավորություն և նոր ուժերով կվերադառնան աշխատանքի:

Իրավունքի կողմ իրավապշտպան ՀԿ-ն անում է ամեն ինչ տրանսգենդեր անձանց կյանքն ավելի ապահով և բարեկեցիկ դարձնելու համար:

#EU
#TeamEurope
#COVID19
#StrongerTogether

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ ԴԱՏԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

1. Մ. Օ.-ն դիմել էր «Իրավունքի կողմ» ԻՀԿ, խնդրելով աջակցել ոստիկանության կողմից արտակարգ դրության պայմաններում մեկուսացման կանոնները ենթադրաբար խախտելու համար նշանակված տուգանքը վիճարկելու համար, որով նշանակվել էր տուգանք 100.000 ՀՀ դրամ, իսկ այնուհետև այն փոփոխվել էր և նշանակվել էր տուգանք 10.000 ՀՀ դրամ:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ փաստաբանի կողմից ՀՀ վարչական դատարան ներկայացվեց հայցադիմում, որով պահանջվում էր անվավեր ճանաչել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնի կողմից Մ.Օ.-ի նկատմամբ նշանակված տուգանքը:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ փաստաբանի կողմից ՀՀ վարչական դատարան ներկայացվեց հայցադիմում, որով պահանջվում էր անվավեր ճանաչել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնի կողմից Մ.Օ.-ի նկատմամբ նշանակված տուգանքը:

ՀՀ վարչական դատարանը, քննելով հայցը, 2020թ. դեկտեմբերի 10 կայացրած վճռով որոշեց ամբողջությամբ բավարարել այն և անվավեր ճանաչվեց Մ.Օ.-ի նկատմամբ նշանակված տուգանքները:

2. Տրանսգենդեր Ա.Ք.-ն 2019թ. դիմել էր «Իրավունքի կողմ» ԻՀԿ և հայտնել, որ նույն թվականի հունվար և փետրվար ամիսներին մի անձ իրենից վերցրել էր 6.000.000 ՀՀ դրամ և հրաժարվում էր այն վերադարձնել:

Ուսումնասիրելով գործը և առկա ապացույցները՝ «Իրավունքի կողմ» ԻՀԿ փաստաբանի կողմից ներկայացվեց հայցադիմում, որպես անհիմն հարստացման գումար պահանջվում էր պարտավորեցնել բռնագանձել պարտքի գումարը և տոկոսները:

Մեկ տարի տևած դատական գործընթացից հետո Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020թ. դեկտեմբերի 28-ին կայացրած վճռով բավարարեց ներկայացված հայցը և 6.000.000 ՀՀ դրամը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսները և այլ վնասները որոշվեց բռնագանձել Ա. Կ.-ից հօգուտ Ա.Ք.-ի:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, ընդլայնելով իր աշխատանքների ծավալը հանուն ԼԳԲՏԻՔ անձանց կյանքի որակի բարելավմանը և բարձրացմանը, առաջին անգամ իրականացնում է տարածաշրջանային ծրագիր՝ Վրաստանում գործող «Թբիլիսի փրայդ» ՀԿ-ի և Ուկրաինայում գործող «Լեսբուհիների, գեյերի, բիսեքսուալների և տրանսգենդերների առողջություն և պաշտպանություն» ՀԿ-ի հետ համատեղ: Ծրագիրն իրականացվում է Միացյալ Նահանգների Գերմանական Մարշալ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է բարձրացնել ԼԳԲՏԻՔ անձանց կարողությունների մակարդակը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ջատագովության և առաջնորդության հմտությունների վերաբերյալ՝ ատելության խոսքի, ատելության հիմքով բռնությունների և խտրականության դեպքերի նվազեցման համար, քարոզչական մեխանիզմներով ապահովել համայնքի անվտանգությունն և բարեկեցությունը և խթանել ԼԳԲՏԻՔ շարժման ամրապնդմանը՝ տարածաշրջանում ժողովրդավարական արժեքների հաստատման համար:

Ծրագրի ընթացքում երեք երկրներում (Հայաստան, Վրաստան, Ուկրաինա) իրականցվելու են սեմինարների շարք և աշխատաժողովներ ԼԳԲՏԻՔ անձանց և ՀԿ ներկայացուցիչների հետ, հրապարակվելու են սոցիալական հոլովակներ և պատրաստվելու է նոր ձեռնարկ ԼԳԲՏԻՔ անձանց ակտիվիզմի վերաբերյալ:Իրավունքի Կողմ Իրավապաշտպան ՀԿ-ն, լինելով առաջին Տրանս կազմակերպությունը ՀՀ-ում և

B | S | T The Black Sea Trust for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

TBILISI PRIDE

HPLGBT

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

Funded by the European Union and the Council of Europe
EUROPEAN UNION
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE
Implemented by the Council of Europe
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

«ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ՝ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, ընդլայնելով իր աշխատանքները տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում, մեկնարկել է նոր ծրագիր, որն ուղղված է ՀՀ-ում բնակվող երիտասարդ տրանսգենդեր անձանց կարողությունների զարգացմանն ու հզորացմանը՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության, ատելության խոսքի, ատելության հիմքով բռնությունների և խտրականության դեմ պայքարի, տրանսգենդեր անձանց անվտանգության և բարեկեցության ապահովման նպատակով շահերի պաշտպանության համար: Սույն ծրագիրն իրականացվում է Եվրոպայի խորհրդի/Եվրոպական միության «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի և դրա «Արդարադատության մատչելիության խթանում՝ Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելություն խոսքի զոհերի համար արտադատական փոխհատուցման մեխանիզմների միջոցով» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում՝ երիտասարդ տրանսգենդեր համայնքի կողմից և համայնքի համար, որը՝ որպես գենդերային փոքրամասնություն, Հայաստանում ամենախոցելի խմբերից է:

Ծրագրի շրջանակներում մենք կրթելու ենք տրանսգենդեր համայնքի երիտասարդներին ատելության խոսքից, ատելության հիմքով հանցագործություններից և խտրականությունից պաշտպանվելու մեխանիզմների վերաբերյալ, նրանց զինելու ենք մարդու իրավունքների և հավասարության համար ջատագովություն և քարոզչություն իրականացնելու հմտություններով, երկխոսություն և համագործակցություն ենք հաստատելու տրանսգենդեր համայնքի և ՀԿ ներկայացուցիչների միջև՝ համատեղ համագործակցության և ակտիվ քաղաքացիական մասնակցության միջոցով խտրականության դեմ առավել արդյունավետորեն պայքարելու համար: Ծրագրի գործողություններն ուղղված են նաև տրանսգենդեր անձանց հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանն և ընկալման վրա ազդելուն՝ համայնքի տեսանելիության բարձրացման և նրանց վերաբերյալ նորմերի ու կարծրատիպերի կոտրման միջոցով:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

www.RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

facebook.com/RightSideNGO

twitter.com/RightSideNGO

instagram.com/RightSideNGO

+374 - 11 - 880 - 770

©Copyright All Rights Reserved for Right Side NGO.